ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

ՏՆՕՐԵՆ Հ.Եգորյան

31 08 2023թ.

<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՀՈՎՏԱՇԱՏԻ ՄԻՋՆ. ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

ՏԱՐԵԿԱՆ

ՊԼԱՆ

ՏՆՕՐԵՆԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԾՈՎ ՏԵՂԱԿԱԼ

Գ.ՀԱԿՈԲՅԱՆ

2023-2024 ՈՒՍՏԱՐԻ

ՄԿԱ գծով դպրոցի փոխտնօրենի աշխատանքն ընդգրկուն է և բազմաբնույթ, գործունեության թիրախ խմբերը հետևյալն են՝

1. Մանկավարժական աշխատողներ
• դասղեկներ
• ուսուցիչներ
• սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ
. ուսուցչի օգնական

2. Աշակերտներ
• աշակերտական խորհուրդ
• սոցիալապես անապահով աշակերտներ
• անցանկալի վարք ունեցող աշակերտներ
.ուսումնառության մեջ դժվարություն ունեցող աշակերտներ

3. Ծնողներ
• ծնողական խորհուրդ
• ծնողական համայնք

4. Արտադասարանական և արտադպրոցական խմբակներ

5. Ղեկավար և սպասարկող անձնակազմ
• տնօրեն
• ուսումնական գծով փոխտնօրեն
• գրադարանավար

6. Պետական և հասարակական կառույցներ
• ոստիկանություն (ոստիկանության՝ անչափահասների գործերով աշխատակից)
• հասարակական և միջազգային կազմակերպություններ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉԸ

1. Պաշտոնային պարտականությունները՝

1) կազմակերպում է սովորողների դաստիարակչական, արտադասարանական, արտադպրոցական աշխատանքները, այդ ուղղությամբ համագործակցում դասղեկների հետ.

2) մասնակցում է հաստատության և սովորողի ընտանիքի սերտ կապի և համագործակցության ապահովմանը.

3) տնօրենի՝մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալի ղեկավարությամբ կազմակերպում է սովորողների հանգիստն ու ժամանցը, միջոցներ ձեռնարկում սոցիալապես անապահով երեխաներին օգնություն ցույց տալու համար.

4) սովորողների մեջ ձևավորում է պատշաճ վարքագիծ և վարվելակերպ, նպաստում նրանց գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորմանը, մասնագիտական կողմնորոշմանը, դաստիարակում մարդասիրություն և հայրենասիրություն.

5) ուսումնական հաստատության, նրա ստորաբաժանումների մեթոդական միավորումների ղեկավարներին և մանկավարժական աշխատողներին գործնական օգնություն է ցույց տալիս դաստիարակչական աշխատանքներ կազմակերպելու համար.

6) աշխատանք է տանում սովորողների վարքի կուլտուրայի, վարվեցողության նորմերի և կանոնների ապահովման ուղղությամբ, աջակցում դպրոցական ինքնավարությանը, հասարակական վերահսկողությանը.

7) մասնակցում է հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքի, սովորողների առաջադիմության և վարքի ընթացիկ վերահսկմանը.

8) կազմակերպում է ազգային մշակութային ժառանգության պահպանման ու զարգացման ուղղությամբ միջոցառումներ, նպաստում հանրակրթության միջոցով ազգային փոքրամասնությունների համայնքների լեզվի և մշակույթի զարգացման իրավունքի իրականացմանը.

9) մասնակցում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների՝ կրթություն ստանալու իրավունքի իրականացմանը.

10) պահպանում է ուսումնական հաստատության կանոնադրությամբ, ներքին իրավական ակտերով և կարգապահական կանոններով սահմանված պահանջները.

11) համագործակցում է ծնողների հետ՝ երեխաների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում:
2. Հանրակրթական ուումնական հաստատության սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպչի գիտելիքներին, կարողություններին և հմտություններին ներկայացվող ընդհանրական պահանջները՝
1) հանրակրթական ուսումնական հաստատության դաստիարակչական աշխատանքների կազմակերպչի պաշտոնն զբաղեցնողը պետք է իմանա ստորև նշված նորմատիվ իրավական ակտերի այն դրույթները, որոնք վերաբերում են կրթության բնագավառին և կանոնակարգում են պաշտոնի նկարագրով ամրագրված լիազորությունները՝
ա. ՀՀ Սահմանադրությունը, «Կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Լեզվի մասին», «Երեխայի իրավունքների մասին», «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին», Հայաստանի Հանրապետության օրենքները, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը, Հայաստանի Հանրապետության օրենքները, «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությունը, իր պաշտոնային պարտականություններին վերաբերող՝ նախարարության համապատասխան նորմատիվ ակտերը, իրավական այլ փաստաթղթեր,
բ. մանկավարժության, հոգեբանության, ֆիզիոլոգիայի, հիգիենայի հիմունքները,
գ. աշխատանքի պաշտպանության նորմերն ու կանոնները, անվտանգության տեխնիկայի, հակահրդեհային անվտանգության կանոնները, մինչբժշկական օգնության հիմունքները, սովորողների կյանքի և առողջության պահպանման կանոնները.
2) տվյալ պաշտոնն զբաղեցնողի կարողություններին և հմտություններին ներկայացվող ընդհանրական պահանջները ներկայացված են սույն բաժնի 1-ին մասում:
3. Որակավորման պահանջները՝
1) հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպչի պաշտոնն զբաղեցնողը պետք է ունենա բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) կամ միջին մասնագիտական կրթություն՝ մանկավարժական որակավորմամբ:

ՈՒսումնադաստիարակչական աշխատանքների ուղղությունները

N	Պլանավորում	Վերահսկողություն	Ժամկետ	Պատասխան ատու
1	Աշակերտական և ծնողական խորհուրդների ձևավորում	Խորհուրդները ձևավորել սահմանված կարգով	Սեպտեմբեր	ՄԿԱ ԴԱԿ
2	Սովորողների վարքի նկատմամբ հսկողության իրականացում	Հաստատության կոլեգիալ կառավարման մարմնի կողմից հաստատած ներքին կարգապահական կանոնների պահպանում	Սեպտեմբեր-հունիս	ՄԿԱ ԴԱԿ
3	Սովորողների ուսումնական պարապմունքների մշտադիտարկում՝ դաստիարակչական կողմը գնահատելու նպատակով:	Ուսումնական գործընթացի համակարգված հսկողություն	Սեպտեմբեր-հունիս	ՄԿԱ ԴԱԿ
4	Ընթերցանությունը տարրական դպրոցում /ՆԴՎ/	Տեխնիկայի ստուգում	Սեպտեմբեր-հունիս	ՄԿԱ ԴԱԿ
5	Դասապրոցեսի վերահսկողություն դասալսումների միջոցով	Նոր մեթոդների և տեխնոլոգիաների ապահովում	Սեպտեմբեր-հունիս	ՄԿԱ
6	Սովորողների ուսումնական պարապմունքների մշտադիտարկում	Համակարգված հսկողություն	Հոկտեմբեր	ՄԿԱ ԴԱԿ
7	Ուսումնադաստիարակչական աշխատանքների վիճակի մասին հաշվետվության ներկայացում		Փետրվար	ՄԿԱ ԴԱԿ
8	Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ուսումնառության քննարկում	Ուսումնառության ապահովում ԱՈՒՊ համաձայն	Սեպտեմբեր-հունիս	ՄԿԱ ԴԱԿ
9	Վերահսկել կանոնադրությամբ , ներքին իրավական ակտերով,	Համակարգված հսկողություն	Սեպտեմբեր-Հունիս	ՄԿԱ ԴԱԿ

	կարգապահական կանոններով սահմանված պահանջները:			
10	Մասնակցել ներառական կրթության մասնագիտական թիմի աշխատանքներին:	Համակցված աշխատանք	Ուստարվա ընթացքում	ՄԿԱ ԴԱԿ Ուսուցչի Օգնական
11	Խթանել մշակութային մթնոլորտի ձևավորմանը, բարձրացնել ոգեղենը,ազգայինը, համամարդկայինը:			
12	Կատարել սոցիալապես անապահով երեխաների բացահայտում, հաշվառում:		Սեպտեմբեր	ՄԿԱ դասղեկներ
13	Աշխատանք տանել սովորողների վարքի, կուլտուրայի, վարվեցողության նորմերի և կանոնների ապահովման ուղղությամբ:	Կապի մեջ լինել ծնողի հետ		
14	Կատարել դժվար դաստիարակվող, հաճախակի բացակայող, ռիսկային գոտում գտնվող երեխաների հաշվառում: Կատարել անցանկալի վարքի պատճառների ուսումնասիրություն և համապատասխան աշխատանքի պլանավորում:		Ուստարվա ընթացքում	

ՈՒսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպում

	Աշխատանքի բովանդակությունը	Պատասխանատու	Կատարման ժամկետը
1	**Դասղեկական աշխատանքի վերահսկողություն** Դասղեկների դաստիարակչական աշխատանքների աշխատանքային պլանի մշակման վերահսկում և ներկայացում հաստատման:	ՄԿԱ տեղակալ ԴԱԿ	Սեպտեմբեր
2	Դասղեկան ժամերի թեմատիկայի նպատակային ընտրություն՝ ելնելով սովորողների տարիքային առանձնահատկություններից: Դասղեկական ժամերի մշտադիտարկում: Դասղեկներից պահանջել աշխատանքային պլանի հիմքում ամրագրել հետևյալ դրույթները □ Ստեղծել դասարանական ամուր կոլեկտիվ □ Աշակերտներին տալ հայեցի դաստիարակություն, նրանց մեջ արթնացնել ազգային արժանապատվություն: □ Դաստիարակության հիմքում դնել հանրակրթական դպրոցի նկարագրի պահանջները: □ Շաբաթը մեկ անգամ անցկացնել դասղեկի ժամ և այն ծառայեցնել երեխաների բազմակողմանի դաստիարակության և մանկական առողջ կոլեկտիվի ձևավորմանը: □ Հետևողական աշխատանքի միջոցով նվազեցնել անհարգելի բացակայությունները □ Կիսամյակը 2 անգամ հրավիրել ծնողական ժողովներ, ամուր հիմքի վրա պահել աշակերտ-դպրոց-ընտանիք կապը: Ծնողների համար կարդալ մեթոդական զեկուցումներ: □ Յուրաքանչյուր դասարանում ստեղծել ծնող խորհուրդ և ապահովել նրանց մասնակցությունը ուսումնական գործընթացի կազմակերպմանը:	ՄԿԱ տեղակալ ԴԱԿ Դասղեկ Դասվարներ	Սեպտեմբեր Ուստարվա ընթացքում

	Կազմակերպել ներդպրոցական վերահսկողություն տարրական դպրոցում Ընթերցանության գնահատում 2-4-րդ դասարաններում: Ավագ դասարաններում կազմակերպել գրքի քննարկումներ:		

ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

1	Հետևողական աշխատանք տանել աշակերտների գեղագիտական դաստիարակության գործի բարելավման ուղղությամբ:	ՄԿԱ տեղակալ ԴԱԿ Դասղեկ	Ուստարվա Ընթացքում
2	Սովորողների օգնությամբ ձևավորել դպրոցական շենքի միջանցքներն ու դասասենյակները: Ստեղծել և պահպանել կանաչ անկյուններ դասասենյակներում և միջանցքներում:	ՄԿԱ տեղակալ ԴԱԿ Դասղեկ	Ուստարվա Ընթացքում
3	Կազմակերպել էքսկուրսիաներ դեպի գեղագիտական կենտրոններ, մշակութային օջախներ:	ՄԿԱ տեղակալ ԴԱԿ Դասղեկ	Ուստարվա Ընթացքում

<u>ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ</u>

1	Ֆիզիկական դաստիարակությունը իրականացնելու նպատակով հաճախակի կազմակերպել սպորտլանդիաներ, սպարտակիադա, միջդասարանային մրցույթներ: Կազմակերպել ,,Առողջության օրեր,, բուժքրոջ հետ բուժամբուլատորայի միջոցով, ծանոթանալ սովորողների առողջական խնդիրներին:	ՄԿԱ տեղակալ ԴԱԿ Դասղեկ Ֆիզկուլտուրայի ուսուցիչներ	Ուստարվա ընթացքում

2	Կազմակերպել ընկերական խաղեր		
3	Կազմակերպել միջդասարանային, միջդպրոցական խաղեր:		

ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

1	Պարբերաբար կազմակերպել հայրենասիրական լավագույն ֆիլմերի դիտում-քննարկումներ:	ՄԿԱ տեղակալ ԴԱԿ Դասղեկ Զինղեկ	Ուստարվա ընթացքում
2	Կազմակերպել միջոցառումներ, ձևավորել վահանակներ , անկյուններ, նվիրված ազգային հերոսներին: Մոմավառություն նվիրված քառօրյա պատերազմի հերոսների, եղեռնի զոհերի հիշատակին, Արցախյան երրորդ պատերազմում զոհված հերոսների հիշատակին:	ՄԿԱ տեղակալ ԴԱԿ Դասղեկ	Ուստարվա ընթացքում
3	Այցելություն հուշարձաններ, Ծիծեռնակաբերդ,Եռաբլուր, թանգարաններ:	ՄԿԱ տեղակալ ԴԱԿ Դասղեկ	Ուստարվա ընթացքում
4.	Կատարել դասալսումներ քաղպաշտպանության ժամերին;	ՄԿԱ տեղակալ ԴԱԿ Զինղեկ	Ուստարվա Ընթացքում
5	Կազմակերպել համադպրոցական միջոցառումներ նվիրված Հայաստանի Հանրապետությանը, Արցախի Հանրապետությանը, Բանակի կազմավորմանը, Մայիսյան հաղթանակներին:	ՄԿԱ տեղակալ ԴԱԿ Զինղեկ	Ուստարվա Ընթացքում
6	Կազմակերպել դասախոսություններ, քննարկումներ, ֆորումներ, կլոր սեղաններ՝ հայրենասիրական թեմաներով:	ՄԿԱ տեղակալ ԴԱԿ Պատմության Մ/Մ	Ուստարվա ընթացքում
7	Այցելություն Արցախյան երրորդ պատերազմում զոհված՝հերոսների հուշաքարերին, մյուս հերոսների շիրիմներին:	ՄԿԱ տեղակալ ԴԱԿ Պատմության մ/մ Զինղեկ	Ուստարվա ընթացքում

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

1	Աշխատանքային դաստիարակությունը բարձրացնելու ուղղությամբ պարբերաբար կազմակերպել շաբաթօրյակներ, ծառատունկեր, հանրօգուտ աշխատանքներ հողամասում,ծաղկանոցներում:	ՄԿԱ տեղակալ ԴԱԿ Դասղեկ	Ուստարվա ընթացքում
2	Աշխատանք գրադարանին կից: Օգնել գրադարանավարին դասավորելու ՝նորոգելու գրքերը: Գրադարանում կազմակերպել ընթերցումներ, նշանավոր և հոբելյանական օրերի տոնացույցներ: Գրադարանում ստեղծել պատանի ստեղծագործողի ակումբ, որտեղ երեխաները կներկայացնեն իրենց ստեղծագործությունները:	ՄԿԱ տեղակալ ԴԱԿ Գրադարանավար	Ուստարվա ընթացքում
3	Առանց ներդրման պետության կողմից տրամադրվող դասագրքերի հատկացման համար ներկայացնել սոցիալապես անապահով սովորողների ցուցակը:	ՄԿԱ տեղակալ ԴԱԿ Դասղեկ	Ուստարվա ընթացքում

ԱՇԽԱՏԱՆՔ Ա/Խ-ի հետ

1	Կազմակել դասարանական ժողովներ:Ստեղծել դասարանական խորհուրդներ: Մինչև սեպտեմբերի 24-ը կազմակերպել Ա/Խ ընտրություններ,ընտրել ԱԽ նախագահ: Ստեղծել հանձնախմբեր: Ամիսը մեկ անգամ հրավիրել Ա/խ-ի նիստ : Ամրապնդել ծնողական խորհրդի և Ա/խ համագործակցումը:	ՄԿԱ տեղակալ ԴԱԿ	Ուստարվա ընթացքում
2	Հետևել դպրոցում աշակերտների իրավունքների և պարտականությունների կատարմանը:	ՄԿԱ տեղակալ ԴԱԿ	Ուստարվա ընթացքում
3	Հաճախակի կազմակերպել կլոր սեղաններ, քննարկումներ, դպրոցում աշակերտների կողմից առաջադրված խնդրահարույց հարցերի	ՄԿԱ տեղակալ ԴԱԿ Դասղեկ	Ուստարվա ընթացքում

	շուրջ:		
4	Նպաստել որպիսի Ա/Խ աշխատանքները ազդեցություն ունենան երիտասարդ սերնդի պատշաճ վաքագծի , վարվելակերպի ձևավորմանը քաղաքացիապես հասունության զարգացմանը:	ԴԱԿ Ա/խ-ի նախագահ	Ուստարվա Ընթացքում
5. 6.	Կազմակերպել հայրենասիրական բնույթի միջոցառումներ: Ամիսը մեկ անգամ հրավիրել նիստ		Ուստսրվա ընթացքում

ԱՇԽԱՏԱՆՔ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

1	Կազմակերպել դասարանական ծնողական խորհուրդների ձևավորում: Կազմակերպել ծնող խորհրդի նախագահի ընտրություններ: Պարբերաբար հրավիրել դասարանական ծնողական ժողովներ: Կիսամյակը 2 անգամ կազմակերպել և անցկացնել համադպրոցական ժողովներ, ծնողխորհրդի նիստեր:	ՄԿԱ տեղակալ ԴԱԿ	Սեպտեմբեր
2	Բարձր հիմքերի վրա պահել դպրոց-ծնող կապը:	ՄԿԱ տեղակալ ԴԱԿ	Ուստարվա Ընթացքում
3	2023-2024 ուստարվա դասարանական ծնողական խորհրդի կազմը ներկայացնել տնօրենի հաստատմանը:	ՄԿԱ տեղակալ ԴԱԿ Դասղեկ	Սեպտեմբեր
4	Ծնողներին մասնակից դարձնել դպրոցի արտադասարանական- արտադպրոցական գործունեությանը և դաստիարակչական աշխատանքների կազմակերպմանը:	ԴԱԿ	Ուստարվա Ընթացքում

ԱՇԽԱՏԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՏ

1	Բոլոր միջոցառումներին մասնակից դարձնել համայնքապետարանի աշախատակիցներին:	ՄԿԱ տեղակալ ԴԱԿ	Ուստարվա Ընթացքում
2	Աջակցել համայնքային շաբաթօրյակներին, հանրային աշախատանքներին:	ՄԿԱ տեղակալ ԴԱԿ	Ուստարվա Ընթացքում

3	Կազմակերպել համայնքային միջոցառումներ՝ անկախության տոնին նվիրված, հայրենական մեծ պատերազմին, Արցախյան պատերազմին:	ՄԿԱ տեղակալ ԴԱԿ Դասղեկ	Ուստարվա Ընթացքում
4	Այցելել Արցախյան պատերազմի հերոսներին նվիրված հուշաքարերին, շիրիմներին:		

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

2023-2024 ուստարի

ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԱՆՎԱՆՈՒՄ	ԿԱՏԱՐՈՂՆԵՐ	ԺԱՄԿԵՏԸ
<<Գիտելիքը ուժ է>> խորագրով համադպրոցական միջոցառում:	Գ.Հակոբյան Ս.Ստեփանյան Կ.Պողոսյան Դասվարներ	Սեպտեմբերի 1
<<Խաղաղության բանալին>> խորագրով ՝ նկարում եմ խաղաղություն: <<Արևի երկիր Հայաստանս>> վերտառությամբ ֆլեշմոբ: Համադպրոցական աշակերտական և ծնողական ժողովներ:	Տարրական մասնախումբ 2-րդ,, ա,, ,,բ,, ՄԿԱ ԴԱԿ 4-րդ ,,ա,, ,,բ	Սեպտեմբերի 20 Սեպտեմբերի 21 Սեպտեմբեր
Ծնողխորհրդի նախագահի ընտրության կազմակերպում:		Սեպտեմբեր
Աշակերտական խորհրդի նախագահի ընտրության կազմակերպում:		Սեպտեմբեր
<<Իմ ուսուցիչ>> ցերեկույթ	5-րդ ա,բ դաս.	Հոկտեմբերի 5
<<Գրադարանավարի օր>> աջակցություն գրադարանին:	ԱԽ	Հոկտեմբեր 9
<<Ես և մեդիան>> : Քննարկում՝ ինչքանով եմ ծանոթ մեդիա գրականությանը:	8-րդ ա,բ	Հոկտեմբեր 9

<<Դեղնավուն ու սիրուն,ես աշունն եմ սիրում>> խորագրով ցերեկույթ բնության գրկում:	ԱԽ	Նոյեմբեր
<<Մաշտոցյան այբուբենի բանալին>>	Դասվարներ 1-ին ,,ա,, ,,բ,,	Նոյեմբեր
ՄԵՐ ՄԵԾԵՐԸ ՇԱՐՔԻՑ՝ Վ. Համբարձումյան-115	Ֆիզմաթ/մմ	Սեպտեմբեր
Լև Տոլստոյ-195	Օտար լեզվի /մմ	Սեպտեմբեր
Երաժշտության միջազգային օրվան նվիրված ցերեկույթ:	Կ. Պողոսյան	Հոկտեմբեր
Հ. Պարոնյան-180	Հայոց լեզվի գրականության և պատմության մասնախումբ	Նոյեմբեր
Արշակ Պետրոսյան-70/շախմատի միջդասարանային մրցույթ/	Տ. Գայսերյան	Դեկտեմբեր
Պ. Սևակ-100	Գ. Հակոբյան	Հունվար
<<Ամանորյա անցուդարձ>>	ԴԱԿ Տարրական մասն.	Դեկտեմբեր
Հայկական բանակի օրվան նվիրված միջոցառումների շարք.	Միջին դպրոց	Հունվար
Մայրենիի օրվան նվիրված միջոցառումներ.	9-րդ դաս.	Փետրվար

<<Իմ ընթերցած առաջին գիրքը> <<Թումանյանական շաբաթ>> Քաղաքաշտպանության միջազգային օրվան նվիրված միջոցառումների շարք. Տարիանում <<Մարտի 8-ի պողոտան>>:	Զինղեկ ՄԿԱ ԴԱԿ 7-րդ ,,ա,,,, բ,,	Մարտի 1 Մարտի 7
Հայոց Մեծ Եղեռնին նվիրված ֆլեշմոբ	Ավագ դպրոց	Ապրիլի 23
Երթ՝ Եռաբլուր, Ծիծեռնակաբերդ	ԱԽ	Ապրիլ
Համայնքի հուշարձանի, խաչքարերին հարակից տարածքի մաքրման աշխատանքներ	ԱԽ	Ապրիլ
Երթ՝ դեպի Արցախյան պատերազմի հերոսների շիրիմներին:	10-րդ դաս	Ապրիլ
Կավճանկարչություն <<Արևի երկիր Հայաստանս>>	Տարրական դպրոց	Ապրիլ
Սարդարապատի հերոսամարտ	Հումանիտար/մմ	Մայիս
<<Վերջին զանգ>>	12-րդ ,,ա,, ,,բ,,	Մայիս
<<Մ նուկների օրն է՝ 1-ը հունիսի>>	Տարրական /մմ	Հունիսի 1